Հաստատված է
«Ակադեմիական փոխճանաչման
շարժունության ազգային
տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
Նախագահ՝ Ա. Ավետիսյան

_____

«____» փետրվար 2008

Տարեկան հաշվետվություն
2007թ.

ԱՓՇԱՏԿ հիմնադրամը սկսել է իր գործունեությունը 2006 թ.-ին և 2007 թվ. շարունակել է աշխատել երեք հիմնական ուղղություններով՝ մասնագիտական որակավորումների ճանաչում, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում և Բոլոնիայի գործընթացի խթանում: Հանդիսանալով Լիսաբոնի կոնվենցիայի հիմնադրույթների տեղայնացման գործիքը ազգային մակարդակում հիմնադրամը իր գործունեությունը իրականացրել է համաձայն երկրում ընթացող կրթական բարեփոխումների և միջազգային միտումների: Անցած տարին կազմակերպության համար կարելի է համարել հաջողված զարգացման, տեղական և միջազգային համագործակցությունների ընդլայնման, տեղեկացվածության բարձրացման առումով:

Հիմնադրամի անձնակազմը մնացել է անփոփոխ: 2008թ.-ին նախատեսվում է համալրել գրասենյակի կազմը նոր անդամներով՝ մեկ իրավաբան և մեկ մասնագետ կանոնակարգվող մասնագիտությունների համար:

ԱՓՇԱՏԿ-ը մշակել և գործողության մեջ է դրել ինտերնետային կայքը՝ www.armenic.am, որը գրանցվել է ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ միջազգային ցանցում և հնարավորություն է տալիս բոլոր շահառուներին և ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի իր գործընկերներին տեղեկատվություն ստանալ ճանաչման գործընթացների և ազգային կրթական համակարգի վերաբերյալ: Հիմնադրամը նաև պատրաստել և հրատարակել է գրքույկ իր հիմնական գործառույթների վերաբերյալ :

2007 թ-ին . ԱՓՇԱՏԿ- ի կողմից խորհրդատվություն է տրամադրվել ՀՀ պետական մարմիններին, բուհերին և մասնավոր կազմակերպություններին: Մի շարք դեպքերում բացահայտվել են որակավորման կեղծված փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տվել գործատուներին խուսափել անհամապատասխան թեկնածուներին աշխատանքի ընդունելուց: Պետական մարմինները հնարավորություն են ստացել հիմնվելով ԱՓՇԱՏԿ-ից ստացած տեղեկատվության վրա, որակապես բարելավել աշխատանքի ընդունելության պահանջները, պահպանելով պետական մարմիններում բարձրագույն կրթությունը հավաստելու ՀՀ «Կրթության մասին» օրենքի 44.5 դրույթը: Հաշվետու տարվա ընթացքում հայտնաբերվել են 15 կեղծ ակադեմիական փաստաթղթերի դեպքեր: ԱՓՇԱՏԿ- ի գործունեության հետևանքով զգալի բարձրացրել է իրազեկվածությունը ՀՀ-ի բարձրագույն կրթական համակարգի և ձեռք բերված որակավորումների վերաբերյալ: Հատուկ ուշադրություն է հատկացվել Բակալավրի կրթական աստիճանի վրա՝ պարզաբանելով ինչպիսի գիտելիքներ և հմտություններ պետք է ունենա շրջանավարտը, և ինչպիսի ակադեմիական և մասնագիտական հնարավորություններ ունի որակավորումը: Կարևոր է նաև նշել, որ ԱՓՇԱՏԿ-ը հանդիսանալով ՀՀ-ում օտարերկրյա բարձրագույն կրթական որակավորումների ճանաչումը իրականացնող մարմին, խթանել է տարբեր բնագավառներում բազմաթիվ

որակյալ մասնագետների իրենց որակավորմանը համապատասխան աշխատանքի տեղավորվելը:

2007 թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը ուսումնասիրել և ճանաչման որոշում է կայացրել 11 դիմումի վերաբերյալ, որոնք ներառել են Ռուսաստանի Դաշնությունում (2), Ուկրաինայում (2), Իրաքում (2) , Իրանում(1), Գերմանիայում(1), Հունաստանում(1), Թուրքմենստանում(1) և Ադրբեջանում (1) ձեռք բերած որակավորումներ: 2007թ. ընթացքում եղել են նաև դիմորդներ օտարերկրյա բժշկական և իրավաբանական որակավորումներով, որոնց վերաբերյալ ԱՓՇԱՏԿ-ը տրամադրել է խորհրդատվական տեղեկանքներ:

2007 թ. ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը իրականացրել է ընդհանուր 417 խորհրդատվության տրամադրում ՀՀ պետական մարմիններին և մասնավոր կազմակերպություններին՝ ՀՀ-ում և արտերկրում ձեռք բերված որակավորումների վերաբերյալ: Այդ թվում տրամադրվել է 55 խորհրդատվական տեղեկանք արտերկիր մեկնող ՀՀ քաղաքացիներին իրենց կրթությունը, ՀՀ-ում դրա ակադեմիական և մասնագիտական հնարավորությունների վերաբերյալ: Խորհրդատվական տեղեկանքների տրամադրման հիմնական նպատակն է նպաստել ՀՀ-ում ձեռք բերված որակավորման համարժեք ճանաչմանն արտերկրում:

ԱՓՇԱՏԿ-ը ՀՀ կրթական համակարգի և որակավորումների վերաբերյալ խորհրդատվություն է տրամադրել նաև ENIC-NARIC ցանցի գործընկերներին: Խորհրդատվությունը տրամադրվել է տարբեր եղանակներով՝ բանավոր, էլեկտրոնային և սովորական փոստի միջոցով: Այսօր արդեն ԱՓՇԱՏԿ-ի մշտական գործընկերներն են՝ Կանադայի Ontario College of Teachers, ԱՄՆ –ի World Education Services, International Education Research Foundation և մի շարք այլ կազմակերպություններ, որոնք իրենց երկրում իրականացնում են կանոնակարգվող մասնագիտությունների ճանաչումը: ԱՓՇԱՏԿ-ի կողմից օտարերկրյա կառույցներին արագ ու արհեստավարժ տեղեկատվության տրամադրումը զգալիորեն դյուրացրել է ՀՀ որակավորումների ճանաչումը արտերկրում :

ԱՓՇԱՏԿ-ը մշակել է Դիպլոմի հավելվածի ազգային տարբերակը՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որը հաստատվել է կառավարության կողմից 23.11.2007թ.:

Հիմնադրամը մշակել է «Ճանաչման գործողությունների ազգային ծրագիր», որը ներկայացվել է Բոլոնիայի քարտուղարություն: Բոլոնիայի գործընթացին միացած բոլոր երկրների ճանաչման ազգային պլանները վերլուծելու և գնահատելու նպատակով Եվրախորհուրդը և Եվրամիությունը ձևավորել են Աշխատանքային խումբ, որի մեջ ընդգրկվել է նաև հիմնադրամի Գործադիր տնօրենը: Աշխատանքային խումբը 2008թ.-ի վերջին Բոլոնիայի քարտուղարությանը պետք է ներկայացնի հաշվետվություն թե ինչպես են կիրառվում Լիսաբոնի կոնվենցիայի դրույթները տարբեր երկրներում, որոնք են ընդհանուր խնդիրները և այն միջոցառումները, որ անհրաժեշտ են ճանաչման մեխանիզմների բարելավման համար: Նաև կքննարկվեն օրենսդրական դաշտի անկատարությունը, միասնական աստիճանների շնորհումը և ճանաչումը, տրանսազգային կրթության ճանաչման առանձնահատկությունները և ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի դերը այդ գործընթացում:

2007 թ. հունիսի 17-19-ը Բուխարեստում տեղի ունեցած ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ ցանցի տարեկան հանդիպման և Լիսաբոնի 4-րդ Միջկառավարական կոմիտեի համաժողովի ժամանակ կազմակերպության Գործադիր տնօրենը ընտրվել է կոմիտեի փոխնախագահի պաշտոնում երեք տարի ժամկետով և վերընտրվելու հնարավորությամբ: Լիսաբոնի Միջկառավարական կոմիտեն ստեղծվել է 1999 թ. վերահսկելու համար կոնվենցիայի ներդրումը: Կոմիտեում ներկայացված են Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի անդամ՝ բոլոր 49 երկրների ներկայացուցիչները, Եվրոպական բուհերի ասոցիացիայի, Եվրոպական ուսանողների ասոցիացիայի, Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ-ի և Եվրամիության, ինչպես նաև մի շարք այլ տարածաշրջանների երկրների (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլ) ներկայացուցիչներ: Կոմիտեն իրավասու է հաստատելու որակավորումների ճանաչման հետ կապված հանձնարարականներ:

ԱՓՇԱՏԿ-ի գործունեության մի մասը ներառում է աշխատանքներ, որոնք ուղղված են Հայաստանում Բոլոնիայի գործընթացի խթանմանը: Բոլոնիայի գործընթացի կարևոր ուղղություններից է ուսանողների և դասախոսների շարժունությունը: 2007թ. Լոնդոնում տեղի ունեցած նախարարական գագաթաժողովում կրթության նախարարները պարտավորվեցին միջոցներ ձեռնարկել խթանելու շարժունությունը: Գնահատելու համար Հայաստանում ակադեմիական շարժունությունը ԱՓՇԱՏԿ-ը կատարել է հետազոտություն պետական և որոշ խոշոր հավատարմագրված մասնավոր բուհերում: Հետազոտությունները ցույց են տվել, որ բուհերում շարժունությունը հիմնականում ծավալվում է միջպետական համաձայնագրերի և միջբուհական պայմանագրերի շրջանակներում, միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների դրամաշնորհների հիման վրա և առանձին դեպքերում անհատական նախաձեռնությամբ: ՀՀ բուհերի մեծամասնությունը քայլեր է ձեռնարկում իրենց գրավչությունը բարձրացնելու նպատակով: Արված հետազոտության արդյունքները, որը ներառում է 12 բուհ տեղադրված են կազմակերպության ինտերնետային կայքում:

Բոլոնիայի գործընթացին միացած 46 երկրների կրթության նախարարները երկու տարին մեկ հանդիպում են գնահատելու երկրների ձեռքբերումները, որոշում են հաջորդ երկու տարվա առաջնայնությունները և ձևակերպում իրենց հանձնարարականները կոմյունիկեի տեսքով: 2007թ.-ին Լոնդոնում տեղի ունեցավ հերթական նախարարական գագաթաժողովը, որի ժամանակ առաջին անգամ Հայաստանը ներկայացրեց Ազգային զեկույց մեր երկրում ընթացող կրթական բարեփոխումների վերաբերյալ և համապատասխանաբար գնահատվեց: Հաջորդ երկու տարվա հիմնական շեշտադրումները ձևակերպվեցին Լոնդոնի կոմյունիկեում (տե՛ս Հավելված 1); Մինչև հաջորդ 2009թ. նախարարների հանդիպումը ընկած ժամանակահատվածում գործելու են մի շարք եվրոպական աշխատանքային խմբեր, որոնց գործունեությունը համակարգում է Բոլոնիայի գործընթացին հետամուտ խումբը (ԲԳՀԽ): Այստեղ ընդգրկված են 46 երկրների ներկայացուցիչները: 2007թ. հոկտեմբեր ամսին տեղի ունեցավ ԲԳՀԽ հանդիպումը, որի ժամանակ քննարկվեց 2007-2009թթ. Աշխատանքային ծրագիրը և ձևավորվեցին աշխատանքային և կոորդինացիոն խմբեր: Հայաստանը, որը ԲԳԾԽ-ում ունի երկու ներկայացուցիչ՝ Մ. Մելիք-Բախշյանը(ԿԳՆ, բարձրագույն մասնագիտական կրթության և քաղաքականության բաժնի պետ) և Գ.

Հարությունյանը (ԱՓՇԱՏԿ-ի տնօրեն), ընդգրկվեց Համաշխարհային ուղղվածություն և Գնահատման(Ազգային զեկույցների) աշխատանքային խմբերում:
Շարժունության կոորդինացիոն խմբի աշխատանքները, համաձայն ԲԳՀԽ-ի որոշման նախագահելու է Գ. Հարությունյանը:

Բոլոնիայի գործընթացին մասնակցող Հայաստանն իր բարձրագույն կրթության համակարգը վերաձևում է եվրոպական չափանիշների համաձայն:
Որակավորումների և ավարտական փաստաթղթերի միջազգային ճանաչումը և որակի ապահովումն ու հավատարմագրումը հանդիսանում են Բոլոնիայի գործընթացի երկու հիմնական գերակայությունները: Եվրախորհուրդը , ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպական հանձնաժողովի հետ միասին, հիմնադրել է Եվրոպական որակի ապահովման գործակալությունների ցանցը և հետևողականորեն աջակցում է երկու ցանցերին՝ ENIC/NARIC և ENQA:

Որակի ապահովումը անհատի որակավորման ճանաչման անհրաժեշտ նախապայմանն է, որի մասին նշվել է 2001 թ. Պրահայի կոմյունիկեյում: Միայն որակի/հավատարմագրման մասին տեղեկությունները դեռ բավարար հիմք չեն գնահատելու անհատի որակավորումը: Որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ տեղավորել անհատի որակավորումը ընդունող երկրի կրթական համակարգում կամ աշխատաշուկայում , անհրաժեշտ է որակավորումը շնորհող երկրի կրթական համակարգի խորը իմացություն: Միջազգային համատեքստում ԷՆԻԿ/ՆԱՐԻԿ –ը և ENQA-ն ունեն մի շարք համատեղ ծրագրեր մասնավորապես կապված միասնական տերմինաբանության բառարանի մշակման, միասնական աստիճանների և ուսումնական ծրագրերի, տրանսազգային կրթության խնդիրների հետ: Միջազգային կրթական հանրությունը հասկանում է, որ Բոլոնիայի գործընթացի այս երկու գերակայությունների կոհերենտ զարգացումը կխթանի եվրոպական կրթական տարածաշրջանի ձևավորումը, որտեղ ուսանողները և դասախոսները կարող են ազատ տեղաշարժվել՝ ակնկալելով իրենց որակավորումների արդար ճանաչումը: Ազգային մակարդակում անհրաժեշտ կլինի, որ այս ուղղությունները ոչ միայն գործեն իրենց իրավասությունների սահմաններում, այլ նաև սերտ համագործակցեն, որը հնարավորություն կտա ճանաչել ՀՀ ազգային կրթական համակարգը միջազային հանրության կողմից, դարձնելով այն գրավիչ ու մրցունակ՝ ճանաչման արդար ու թափանցիկ ընթացակարգերով:

ԱՓՇԱՏԿ-ի գերակայությունները 2008-2010թթ. համար կարելի է բաժանել՝

- ճանաչման վերաբերյալ կրթական օրենսդրական դաշտի լրամշակում, գործող միջկառավարական և միջբուհական շարժունության ծրագրերի գնահատում՝ ըստ Լիսաբոնի կոնվենցիայի և նրան հարող փաստաթղթերի,
- աջակցություն շարժունությանը և փաստաթղթերի ճանաչումը խթանող գործիքների՝ դիպլոմի հավելվածի և կրեդիտների փոխանցման և կուտկման համակարգի արդյունավետ ներդրմանը,
- ճանաչման ընթացակարգի հաստատումը հիմնադրամի խորհրդի կողմից,
- տրանսազգային կրթության օրինակների ուսումնասիրությունը, գնահատումը և ճանաչումը,
- կարգավորվող մասնագիտությունների ուսումնասիրությունը և նրանց

ճանաչումը

- աջակցություն որակավորումների ազգային համակարգի մշակմանը,
- տեղեկատվության տրամադրումը բոլոր շահառուներին և գործընկերներին,
- համագործակցություն հավատարմագրման և որակի ազգային ծառայության և միջազգային ENQA ցանցի հետ: